



ԳՈՒՐԳԵՆ ՄԱՀԱՐԻ

Հարցազրույց այն աշխարհում (Երգիծանք)

Սովորաբար, ինչպես գիտենք, մարդը մի անգամ է ծնվում և մի անգամ էլ մեռնում:

Բայց ահա երագում... այս քանի անգամ է, որ մեռնում եմ...

Եվ այսպես, անցյալ օրը ես մեռա:

Այս անգամ անդրաշխարհի սահմանագլխում ինձ հանդիպեցին տեղական թղթակիցները: Հանկարծակիի եկա.

-Ներեցեք, դուք...

-Մենք հրեշտակապետական, առաքելական աստիճաներ ունենք,- պատասխանեց նրանցից մեկը,-բայց զբաղվում ենք լրագրությամբ, ասացեք, ինդրեմ, ինչպե՞ս եք ձեզ զգում, ինչպե՞ս մեռաք...

Ես. - Բարեհաջող: Շնորհակալություն իմ բժիշկներին:

Թղթակից.-«Երկիր-Անդրաշխարհ» երթուղին ինչպե՞ս գտաք:

Ես -Սքանչելի: Միայն մի թերություն ունի՝ շարժումը միակողմանի է: Ես գնալ չի կարելի:

Թղթակից (համլետավարի). - Ո՛չ, ո՛չ, այստեղից չի վերադարձել դեռ ոչ մի ճամփորդ... Բայց դրա փոխարեն շատ են մեզ մոտ այնպիսիները, որոնք չնայած այստեղ են գրանցված, բայց փաստորեն ապրում են երկրի վրա: Եթե չեմ սխալվում, նրանք կոչվում են անմահներ: Վերցրեք թեկուզ Կոմիտասին, Թումանյանին, նրանք ավելի երկրի վրա են ապրում, քան... (հեզնանքով) անմահներ... ինչպե՞ս չէ, եթե մարդը մահացավ՝ ուրեմն մահացավ, էլ «անմահ» ո՞րն է...

Ես. - Այո՛, բայց նրանց գործերը...

Թղթակից (ընդհատելով).-Նրանց գործերը նույնպես փոխադրվում են այստեղ, նայվում են, վերանայվում, արդարները գրանցվում են դրախտում, մնացածը՝ դժոխք: Երկնային հաստատություններն ու գերատեսչությունները աշխատում են անվթար, իսկ դուք...Շատերին դուք արձաններ եք կանգնեցրել, որոնք մեզ մոտ միայն պատժարանների են արժանացել և ընդհակառակը, շատերին դուք խաչել եք, անարգել և նետել մոռացության գետը, այնինչ մեզ մոտ նրանք դրախտային քաղաքացիներ են... Այսպես աշխատել չի՛ կարելի: Ի՞նչ նորություններ կան Երևանի գրական աշխարհում:

Ես. - Չանսադություն: Գրողները գրում են, քննադատները...
Քննադատները չեն քննադատում:

Թղթակից. - Ինչու :

Ես. - Գտնում են, որ այդպես ավելի լավ է առողջության համար:

Թղթակից. - Կիրովականում ի՞նչ աղմուկ է:

Ես. - Առանձնապես ոչինչ. հիմնադրվեց Հայաստանի գրողների միության Կիրովականի մասնաճյուղը: Մասնաճյուղը շուտով կստանա ավտոմեքենա, գրամեքենա, քարտուղարուհի՝ զանգի կոճակով և գրականության զարգացման համար խիստ անհրաժեշտ նման այլ բաներ:

Թղթակից. - Ի՞նչ դրության մեջ են արձակն ու չափածոն:

Ես. - Լավ: Առաջատարը մնում է բանաստեղծությունը: Կան նաև հիանալի արձակագիրներ, բայց... Վերջերս լույս տեսան Շիրազի, Սահյանի, Հր. Հովհաննիսյանի, Էմինի գրքերը... Չէ, դեռ շատ հաց ու պանիր պիտի ուտի մեր արձակը, չափածոյին հասնելու համար:

Թղթակից. - Մալադեց, պոեզիա...

Ես. - Նույն կարծիքին եմ և ես: Առաջավոր բանաստեղծներից Գևորգ Էմինը միրուք թողեց և պիտի ասել, որ դա մեծապես ազդեց հենց իր պոեզիայի վրա: Լրջացավ, խորացավ: Եթե ես էլի մի անգամ առիթ ունենամ խառնվելու պոեզիայի գործերին, ապա ամենայն լրջությամբ խորհուրդ պիտի տամ մի քանի պոետների, որ միրուք թողնեն...

Թղթակից. - Արձակագիրների մեջ միրուք երևա՞ց...

Ես. - Ո՛չ, բայց լավ արձակագիրներ, թեկուզ անմիրուք՝ կան: Նրանք դժվարությամբ են մտնում գրականության գիրկը, սակայն ի վերջո մտնում են:

Թղթակից. - Հետաքրքիր է:

Ես. - Խիստ հետաքրքիր: Նրանք իրենց վեպերում պատմական բերդեր են կառուցում, մեջը լցնում հայ ռազմիկներ, հետո թշնամու գորքը բերում են, շրջապատում բերդը և կռիվն սկսվում է: Մի սպանված հայի դեմ տասը ոստիկ գլուխ է թռչում, ու վեպը թեժանում է: Հետո հայ սակավաթիվ զինվորները դուրս են գալիս բերդից, հարձակվում թշնամական բանակի վրա և ոչնչացնում նրանց մինչև վերջին մարդը... Նման վեպերը սպառվում են ժամերի ընթացքում:

Թղթակից. - Օ-լա-լա՛ ...

Ես. - Օ-լա-լա ու մի բան էլ ավելի: Ժողովրդին հաց է պետք տալ,-ասում են որոշ «հացթուխներ»,-թեկուզ դա լինի սև... Ու տալիս են: Մն հա՞ց: Ո՛չ, սև

հաց հիշեցնող ինչ-որ բան, որը կոչվում է ոչ այլ ինչ՝ «հայրենասիրական վեպ»: Ըստ էության այստեղ ոչ հայրենիք կա, ոչ սեր կա, ոչ վեպ: Կա միայն գրող կոչվելու, գիրք տպելու հաջողությամբ պսակված մարմաջ... Դեմիրճյանին պիտի հանդիպե՞մ...

Թղթակից. - Նայած...

Ես. - Ի՞նչ նայած: Ես ուզում եմ անպայման տեսնել նրան և ասել մի քանի խոսք. «Վարդանանք» գրեց և չգրեց, թե ինչպե՞ս գրեց, ինչպե՞ս պետք է գրել և ինչպե՞ս գրվեց այս հիանալի վեպը, որպեսզի նորերը սովորեին, թե ինչպե՞ս պետք է գրել հայրենասիրական պատմավեպը:

Թղթակից. - Նորարարության մասին ի՞նչ կասեիք...

Ես. - Ի՞նչ կարող եմ ասել: Դա մի ճանապարհ է, որը վերջիվերջո տանում է մինչև Գրիգոր Նարեկացի: Այո՛, այո՛, պարզվում է, որ Նարեկացին ամենամեծ նորարարն է եղել և ինքը ոչ մի տեղեկություն չի ունեցել այդ մասին...

Թղթակից. - Այն ժամանակ գիտական քննադատություն չի՞ եղել... Կարող էին մի կերպ գլխի գցել, հասկացնել...

Ես. - Գիտական քննադատություն եղած տեղը Նարեկացի՞ կլինի... Չէ, չի՛ լինի... Ի դեպ, Չարենցին պիտի հանդիպե՞մ:

Թղթակից (երեսը դարձնելով դեպի հարավ). - Այ, տեսնո՞ւմ եք, այս ամբողջ աշխարհամասը դրախտի հայկական սեկտորն է: Ահա՛, ահա՛ քո Չարենցը: Հետինը Միսաք Մեծարենցն է, դուրս են եկել զբոսանքի: Բայց դու ի՞նչ գործ ունես Չարենցի հետ: Չարենցը սուրբ է...

Այստեղ էր, որ ես զարթնեցի:

1969թ.